ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 139-Ա

« 10 » ՀՈՒԼԻՍԻ 2023Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի ապրիլի 3-ի «ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ստեփան Ստեփանյանի լիազորությունները դադարեցնելու և տնօրենի պարտականությունների կատարումն Արեգնազ Մկրտչյանի վրա դնելու մասին» N69-Ա որոշման մեջ կատարել լրացումներ.

1.1 «1. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «188-րդ հոդվածով» բառերը.

1.2 «2. «2.» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Սահմանել լրավճար՝ ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակով հաստատված տնօրենի դրույքաչափի և Արեգնազ Մկրտչյանի համար սահմանված աշխատավարձի տարբերության չափով:» բառերը.

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7/10/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր